ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.2-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հունվարի 26-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 4 (չորս) հայտ՝

- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի

կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի 2.4. կետի պահանջներին:

Մասնավորապես՝

հայտում կցված է տարածքի վարձակալության պայմանագիր, առանց դրա հիմքերը հավաստող փաստաթղթերի (հասկանալի չէ վարձակալության հանձնվող տարածքը արդյո՞ք որևէ իրավունքով պատկանում է վարձատուին), ինչպես նաև ինքնակենսագրականների փաթեթը ստորագրված և կնքված չէ:

Թվով 3 (երեք) կազմակերպության՝

- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,
- «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի

կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են մրցույթի համար սահմանված չափորոշիչներին:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «Լոռու տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի

կողմից ներկայացված հայտը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 3 (երեք) կազմակերպություն՝

- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ն,
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ն,
- «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամը:

3. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագրեր Ծրագրի հավելված 2-ի 4.2 կետով նախատեսված **«Աջակցություն զբոսաշրջային այցելավայրերի կառավարման կազմակերպությունների (DMO-ների) գործունեությանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 3 (երեք) կազմակերպության՝

- «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի,
- «Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի,

• «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի հետ

ներքոնշյալ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝

- *«Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից՝ լրացուցիչ տեղեկատվություն գրասենյակային տարածքի շահագործման թույլտվության վերաբերյալ,*
- *«Սյունիքի տարածաշրջանի զբոսաշրջության կառավարման գրասենյակ» ՀԿ-ի կողմից՝ Ծրագրի բյուջեի և համապատասխանաբար ֆինանսական նախահաշվի վերախմբագրված տարբերակը,*
- *«Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի կողմից՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի և «Դիլիջան Դեվելոփմենթ» Հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի սկորագրված տարբերակը, ինչպես նաև Ծրագրի բյուջեի և համապատասխանաբար ֆինանսական նախահաշվի վերախմբագրված տարբերակները:*

4. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Հ.Սահակյան - _____

Մ.Հակոբյան - _____

Շ.Հովսեփյան - _____